

Դ Ի Տ Լ Կ

Ի Ի Ի Օ Լ Ն Դ Ե Լ Ն

Պատմութիւն քաղաքական, պատերազմական, բանասիրական, եկեղեցական դիպուածներու, որ հիմնական ստեղծողը իր շնորհիւ լրացւած է:

Որ է իբր տարեգրութիւն մը աս տարւած:

I 8 I 5

Աշխատասիրեալ 'ի Հ. Մանուէլ Աշտիկ Պատմական Կրթական Սոցիալական' :
'ի Միջնորդական միջնորդութիւն :

'ի Խնդրոյ և յարգեանց Ընկերութեան Արշարունեաց :

Ի ԶՈՐՐՈՐԴ ԱՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Աս տարեգրութիւնը՝ որ հոս մէկ տեղ ժողովրդած մէկ տարւած պատմութիւն է, ամեն տասնըհինգ օր մէջմը ետեւէ ետեւ կը տարւի, ու այժմ մէկ բոստայով քանի մը թերթ կը տարւի Ստանպուլ, նոր նոր պատմութիւններով:

Ով որ կուզէ առնել, ուր տեղ ինչ քաղաք որ ըլլայ, իր անունը գրել տայ Ստանպուլ Պատմական Կրթական Սոցիալական, որ գրեթէ անհրաժեշտ է շուրջ խառն խանին քովերը, վարելով քառասուն զոյճ մէկ անգամ բոլոր մէկ տարւած համար: Ի նախկին ամեն մէկ բոստայ գալուն իր մարդը հոն խրկէ, առանց բան մը վարելու կառնէ եկած թերթերը:

Ի ՎԼԵՆԻՏԻՆ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒՄ

Միջնորդական միջնորդական



Դ Ի Տ Ա Կ

Բ Ի Ի Չ Ա Ն Դ Ե Ա Ն

Դ Ի Ն Դ Ի Ո Յ

Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ե Ա Ն Ա Ր Շ Ա Ր ՈՒ Ն Ե Ա Յ

1815.

1. 2. 5. 7. Յ ՈՒ Ն Վ Ա Ր Ի:

Ա Մ Ե Ր Ի Դ Ա.

Միացեալ նահանգներ:

Վասիլիսն: 1 Հոկտեմբեր:

Լ մերիգայի միացեալ նահանգները՝ բարեկամ են ցամաքային տէրութեանց բոլոր եւրոպայի • դեսպան խրկեր են Սպանիա, Ֆիլիպին • ասանկ ալ Ֆիլիպինը խրկեր է աւանց մէկ արտաքոյ կարգի դեսպան մը:

20ին:

Սեպտեմբերի 20ին երբոր ծերակոյտը ժողովեցաւ՝ յանձնեց որ քննեն Վասիլիսն քաղերն պաշտպանութե վիճակը, ու թէ որ հարկաւոր է աւելի ամրցնեն: Հոկտեմբերի 5ին որ ժողովեցան՝ Լաոօք առաջարկեց ծերակուտին՝ նորոգել այնչափ աւերմունքը որ ըրաւ ինկիրիզը՝ Գամբիուօյին, ու ուրիշ հասարակաց շէքերուն Վասիլիսն մայրաքաղաքին • որ պահեն մնացորդները աս շէքերուն՝ որ ժամանակով չաւրովին:

Տ Ա Ն Ի Մ Ա Ր Բ Ա.

Քօբէհայի. 10 Դեկտեմբեր:

Ղաշնադրութի հաշտութե Տանիմարային ու Մոսկովին մէջը: Ասոնց Լիակատար իշխանութի ունեցողները էին Էսմոննտոս Պուսքէ, թաղաւորին Շամպէուլանը, Լէն.

Լ Պարոն Պետրոս Սուխթէլէն Ճէնէալ ղինոնորական Ճարտարապետութե, Լէն:

1. Խաղաղութե, ու բարեկամութի մէջ Տանիմարայի թաղորին, ու Մոսկովի կայսեր: Աս երկու միապետ ղաշնակիցները աւանց կերպով կուղեն պահել կատարեալ միաբանութե իրենց երկրին ու հպատակաց մէջ, ու սրտանց խորշիլ սախնիշ ըլլալ ամեն բանէ որ զաս երջանիկ միաբանութեը կրնաովէ:

2. Քաղաքական վերաբերութիւնները, ու հին ղաշնադրութիւնները որ կը դադարէին երկու կողմանց մէջ պատերազմին առաջ, (որ քիչ մը ատեն կախ թողուց զանոնք,) հիմնկվան ղաշնադրովս՝ նորէն կը հաստատովին իրենց առջի ուժը, որչափ որ դէմ չեն ելար ան ղաշնադրութեց, որ հիմայ կը լան Մոսկովի կայսեր, ու ուրիշ հիւսիսական թաղաց մէջ:

3. Առուտուրը ու նաւարկութեը երկու տէրութեանց մէջ կը հաստատովին ան օրէքներով ու կանոններով, ինչպէս որ էին պատերազմին առաջ:

4. Կապը՝ որ դրոճած է յառուկ ստացոճածոց վրայ երկու Միապետներուն, ու իրենց հպատակներուն, ինչպէս կապն ալ նաւերուն վրայ երկու ազգերուս ղանազան նաւահան դըստից մէջ Տանիմարային ու Մոսկովին, բարձրիկ՝ հաստատովէն ետեւ աս ներկայ ղաշնադրիս • ու ղաշնադրութե օրէն սկըսած:

սած՝ երկուքին ժողովուրդն ալ կրնան նուրէն պահանջմունք ընել դատարանի առջև, ինչ որ պատերազմը կախ թողուց զանոնք:

5. Երկու կողմնալ կրպարտաւորեն զիրենք՝ առանձին հաշտութիւն չընել հասարակաց թշնամոյն հետ:

6. Աստի աս բարեկամութեան նորոգվելուն համար՝ Մոսկովի բանակը՝ որ պաշարեր է զԱմպուռկը, չի կրնայ չարաբել Հօլշթայնի բնակիչները՝ ինչեւիցէ պահանջմունքով: Աս դաշնագիրս երբոր ստորագրվի, ան օրէն սկսած, ինչ պաշար զահրէ որ տայ բաղաբը՝ Մոսկովի բանակին, ամենուն գինը վճարէ Մոսկովի կայսրը, շուտով՝ որ չափ որ կարելի է, դո՛ս խօշոր-ը լրացով երկու կողմնալ: Իսկ ան ամէն բաները՝ որոնք տրուեցան Մոսկովի բանակին, անցած յուն վարի 14 էն, որ օրը դադարեցաւ ամէն թշնամութեան հանձնարարայի ու Մոսկովի մէջ զօրութեմէկ յօդուածի մը դաշնագրին հաշտութեան շնորհիւ հետ, ինչպէս ան օրը յորում ստորագրվի աս հիմակվան դաշնագիրս, երկու Միապետները՝ նոյն կերպով բարեկամաբար կանոնաւորվին: Տանիմարքայի թէ՛ւորին կարգեալ վրակեցունները, ու Մոսկովի բանակին զիւաւորները՝ գինը կտրեն ան տրված բաներուն: Աս վրակեցունները միաբանին բաշել մէկ Սահմանագրի մը Ամպուռկին շրջանակը, ու Մոսկովի բանակը՝ որ պաշարեր է Ամպուռկը՝ չի կրնայ անցնիլ ան սահմանած դիմը:

7. Երկու կողմն ալ մէկ մէկու երաշխաւոր չի կրնայ կրնայ պահպանել մէկ մէկու երկիրները, ինչպէս որ զրոյվին ընդհանուր հաշտութեան տեսնը:

8. Հաստատութիւն աս դաշնագրիս փոխվի Քօթէնհայի քաղաքը 6 շաբթւական մէջ, կի՛մ աւելի շուտով որչափ կարելի է:

Ի հաւատարմութիւն ասոնց, ևն:

Ըրած ՚ի Հաննովեր. 8 փետրվարի. 1814:

Խոմսնտոս Պուռքէ: Սուխթէլէն:

Աս դաշնագիրս հաստատուեցաւ 16ր նոյեմբերի. ու հիմայ հրատարակուեցաւ:

18ին:

Փոխնիքի Բրիտանիո Ասիային մարմինը՝ հանդիսի՛ն թաղուեցաւ ՚ի Օտէնսէէ, ամսուս չին:

Աւրստ. 18 Դեկտեմբերի:

Կրսեն՝ թէ Ամպուռկի ճերակոյտը աս օրերս զօրը ընկաւ ստորագրել մէկ պարտաւորութեան մը, որ հիշ մէկ նորոգութի մը չընէ քաղքին բերդերուն, ինչպէս որ լմննայ Վիեննայի

ընդհանուր ժողովը: Ասկէ շատ կըվախնան Համպուռկցիք՝ չըլայ թէ կորսնցնեն իրենց՝ անկախ ազատութիւնը:

Ը Վ Ե Տ:

Սիւօքսի. 2 Դեկտեմբերի:

Երկուքին ժողովը ասկէ ետեւ կըժողվի ամէն 3 տարի՝ նոյն ժամանակը Շվեդի ժողովին հետ: Աւրի ժողովը պիտի ըլլայ յուլիսի առջի օրը 1815. ասոր մէջ պիտի խօսվի Երկուքին օրինաց փոփոխութեան վրայ, որ հարկաւոր է միանալու Շվեդիին հետ:

— Երկուքին պարտքը, մէկ տեղ աւելցնելով աս ետքի պատերազմիս ատենները եղածն ալ, որ է մեծագոյն մասը, կելլէ աւելի քան զ20 միլիոն Սկուլլ, քի՛մ աւելի քան զ100 միլիոն զուռուշ:

16ին:

Ը մսուս 14ին Երկուքին դեսպանները՝ հանդիսի՛ն ներկայացան թէ՛րին, ամէն մեծամեծաց առջև: Իրենց գլխաւորը խօսեցաւ թէ՛րին. ու թէ՛րին պատասխան տալէն ետեւ, երդում ըրին հաւատարմութեան իրենց խրկողներուն բերնէն, ու ետքը պազին թաղաւորին ձեռքը:

ՄՈՍԿՈՎ.

Բիւլլետեն. 5 Դեկտեմբերի:

Պարսից դեսպանը Մոսկովի տեղութեան, հոկտեմբերի 24ին հասաւ Ճէոնիւմօք. ուր արժանաւոր պատուով ընդունեցան զինքը: Երկրորդ օրը հաց կերաւ Քիթպետին քովը, ուր խմեցին զինի կայսեր կենդանութեան ու պարսից Շահին: Աս դեսպանս նստած է ինկիթէնայ, ինկիթիզերէն ալ կը խօսի քիւմը. շատ աղէկ դիտէ Եւրոպայի դիրքը, ու Մոսկովի ոռոգութիւնները, հիշ չի ցրցներ վրան Ասիացոյ փառահեղուհի Բաբան: Իրեն մարդիկները խիստ շատ են, այնպէս որ 150 ձի պէտք եղաւ իրեն ճամբան առաջ տանելու:

ԼԵ ՀԱՍՏԱՆ.

Վարապէտ. 15 Դեկտեմբերի:

Կոստանդին Մոսկովի Մեծտուգան հրաման հանեց, շուտով կարգի մէջ դնել Լէհ բանակը: Աս բանին համար մէկ հրովարտակ մը ըրաւ շատ յուսացուցիչ խօսքերով, որ պատճառ կուտայ կարծելու թէ պիտոր կանդնի Լէհաստանի թաղաւորութիւնը:

Օրինակը հրովարտակին առ Լէհերուն բանակը: Վէհափառ Ալեքսանդր՝ ձեր հղօր պաշտպանը

պանը կրկնէ զձեզ : — Ժողովեցէք զձեզ՝
 ձեր դրօշակներուն տակը . ձեր ձեռքը թող
 սուր առնու՝ ձեր հայրենեաց պաշտպանու-
 թե համար : Երբոր աս մեծանուն միապե-
 տը զբաղած է ապագայ բարեբաղդութեան
 որ կը հոգայ ձեր հայրենեացը , յըցուցէք
 դուք ալ թէ պատրաստ էք՝ ձեր արունդը
 առաջ տանիլ իրեն ազնուական աշխատան-
 քը : — Ան գլխաւորները որ 20 տարիէն
 աւելի առաջնորդ եղան վեր հանել զձեզ
 պատուոյ ծառը , պիտի գիտնան բանալ ձեր
 անջիւղ աս ճամբաս ալ : Գիտէ կայսրը՝ մեծ
 համարիլ ձեր քաջութիւնը : Դժբաւքութեց
 մէջ մէկ անյարձղ պատերազմի մը , տեսաւ
 որ ձեր պատիւը մնաց ձախորդ պատահար-
 ներէն ետեւ , որոյ պահպանութիւն հիւ ձեզ
 մէջէր կախվի : Գերազանց պատերազմա-
 կան գործքեր՝ անուանի ըրին զձեզ մէկ ըմբ-
 շութե ինքն մը մէջ , որու վախճանը շատ
 անգամ ձեզի անծանօթ էր : Տիմայ՝ որ ձեր
 ջանքը՝ հիւ ուրիշ բանի համար նուիրած չէ ,
 բայց եթէ ձեր հայրենեաց համար , պիտի
 ըլլաք անյաղթելիք :

Այլ զինուորորդ , տուէք առջի օրինակը ա-
 ռաքինութե , որ սիրտ պիտոր տայ ձեր ամ-
 մեն քաղաքակիցներուն . մէկ անգամի հպա-
 տակութի մը՝ կայսեր , որ իր մէկ հատիկ հո-
 գը՝ է ձեզ մէկ աղէկ վիճակի մը մէջ դնել .
 սէր՝ առ իրեն կայսերական անձը , հնազան-
 դութի , կարգի կանոնի մօտիկ ընել , ու միա-
 բանութի . ասոնցմով գործակից կըլլաք բա-
 րեբաղդութե ձեր հայրենեացը , որ Տիմայ
 կը գրտով իրեն ամուրվասանին խախտին տա-
 կը : Ասանկով կը հասնիք երջանկուեք՝ որուն
 կեփափաքէք , որ ուրիշները կըրնան խոստա-
 նալ ձեզի , բայց ինքը միայն կըրնայ ձեզի
 ճարել զանհկայ : Իրեն կարողութիւն , իրեն
 առաքինութիւնը՝ երաշխաւոր չէֆէ կըլլան
 ձեզ ասոնց վրայ : ”

Ստորադրած ԿՈՍՏԱՆԴԻՆ :

20ին :

Աս հրովարտակէս աղէկ կերևնայ՝ ինչէ մէկ,
 որ Լէհաստանի բանը դեռ կը տրած չէ : Լէ-
 հաստան իրաւ որ աւելի կըսիրէ ըլլալ բո-
 լորը՝ մէկ առանձին աղղ մը Մոսկովին տա-
 կը , քան թէ փայ բաժին ըլլալ . բայց աս
 ալ յայտնի է , որ երկուքէն ալ աւելի կուզէ
 ըլլալ անկախ ինքի գլխուն , ինչպէս որ ա-
 տենով մը էր երբոր չէր ջնջուած իր անու-
 նը աղղերու ցանկին մէջէն : Աղբքսանդր
 կայսրը , որ առջափ աղէկ երես կըցցնէ Լէ-
 հաստանի վրայ , շատ մեծ մարդ է , հերիք
 մեծասիրտ՝ որ դարձնէ մէկ մեր անկախու-

թիւ . անանկ որ կըրնանք հիւ կասկած մը
 չունենալ , թէ իր առանձնական շահէն շար-
 փի . ու կը հաւատանք , թէ աս միապետը՝
 քիչ ընդդիմութի կըդունայ՝ ուրիշ թագաւո-
 րաց կողմանէ : Գիտենք՝ որ մէկ զօրաւոր
 Միապետ մալ ուզած է ընել մէկ մեծ , զոհ
 մը՝ որ նորէն ոտքի վրայ կանգնեցնէ մեր ան-
 կախութիւնը : Հիմայ ասօր՝ եկեր հասեր է
 աշխրբքիս վրայ արդարութե թաքուցիւն ,
 իրեք Տերութիւններ որ միաբանեցան իրենց
 տակը զմեզ ձգելու , չի միաբանի մի պի-
 տոր , որ դարձնեն մեզի՝ ան վիճակը , որ խե-
 ցին առին մեզմէ : (Օրագրութի Գրասխ :)

Փ Օ Ռ Թ Ո Ւ Գ Ա Լ :

Լեւոն . 1 Դեկտեմբեր :

Փոռթուղալի կառավարող Փոխնիփէին շատ
 շատ անուշութենով , ու հեղութիւն կըլարի .
 թող տուէր անոնց՝ որոնք 1811ին արտը-
 ւած էին Փոռթուղալէն՝ Ֆուանդիկ կողմը
 բռնեցնուն համար , ու քաշված էին Ի վիլ-
 թէնայ , դառնալ իրենց հայրենիքը : Ասանկ
 կը կարծեն ան Փոռթուգէշներուն համար
 ալ թէ թողուն կը գտնան , որոնք Մասսէ-
 նայի բանակին հետ գնացին :

Ս Պ Ա Ն Ի Ա :

Մարտի . 17 Դեկտեմբեր :

Ապանիայի թաքը ամուսն հին մէկ հրովար-
 տակ մը հանեց , որով կըլարգէ մէկ Պատուոյ
 նշան մը . վրան կայ մէկ ոսկիէ խաչ մը , ասոր
 մէկ կողմը մէկ պսակի մը մէջ՝ գրած է աս
 խօսքս . Թագաւորին համար . մէկ ալ կողմէն .
 Կարգէ անկախութեան : Աս խաչս պիտի տրը-
 վի անոնց , որոնք կըրնան յըցնել , թէ կո-
 ռուսին իրենց ազատութիւն Փոխնիփէին փա-
 չէին չէֆէին հրամանին կէտէ , ու յըցնեն ի-
 րենց մեծ սէրը , որով կապված էին թագա-
 ւորին հետ :

— Լեւոնցալ մէկ ձան մը , թէ մէկ բա-
 նակ մը ինկիլիզի ու Փոռթուգէշի զօրքերու
 կըբայէ կոր Փոռթուգալէն Էսթրալմատու-
 ուր վրայ դէպ ի Ապանիա , բայց պէտքը չէ
 հաւատալ : Աս ալ ստուգ է որ շատ աղէկ
 համաձայնութիւն չերևնար Ապանիայի ու ին-
 կիլթէնայի խորհրդարաններուն մէջ :

18ին :

Ապանիայի թագաւորին շատ մեծ շնորհա-
 կարութիւն ու նախաձեռնութիւն կըցցնեն
 քահանաները ու կրօնաւորները . բոլոր հո-
 գեւոր Եղբայրութիւնները Մատրիարին , ու
 վանքերը՝ կրօնաւորներուն , ու մարապետ-
 ներուն շատ մեծ փայլ ունին հանդէսներ
 ընելու իրեն համար : Թագաւորը շատ կը
 նա

նաւորաց վանքերուն մէջ գրել տոճաւ զինքը երբ մեծ Ազգար իրենց։
Ի Գաւիտէէ գրած թղթերը կիմացնեն՝ թէ Սպանեօնները ամէն պատրաստութիւն ըրեր են, որ յուն վարի վերջերը զօրք խրկեն Ամբրիպայ դէպ ի Փլադա դետը. և թէ տերութիւն փոխ ըստակ կուզէ որ շուտով վերցնէ։ 46 կտոր Պէյլի նաւ, ու քանի մը մեծաւեծ վաճառականի նաւեր 10 հազար մարդով, պիտոր ելան Մալտոնաո նաւահանգիստը, որ ծեծկըվին պատամարներուն հետ. բայց շատ դժար կերեւայ կրօնն ցամաքը զօրք թափել։ (Օրագրութիւն Փօրէյի։)

ԻՆԿԻԼԹԵՆԱ.

Լոկաւո. 12 Դեկտեմբերի։

Ըստ առաւօտ հասան Օլանթայի թղթերը, ու բերին աւետիս թէ հաշտութիւն լինցած է Կանտ քաղաքին մէջ Ամերիգացւոց հետ։ Կրօնն թէ՛ երկու կողմնալ դադար են իրենց պահանջմունքներէն։ Չան մը փրուկեցաւ քաղաքին մէջ, թէ նախընթաց թէ՛ութիւնները հաշտութե ստորագրած ըլլան ամուսու Յին։ Աս ձանս հիմ չունի, բայց յոյս կայ թէ կըլայ։

Անցած օրերուն պալատական կազմեթան հրատարակեց պատմութիւն Փոէվօթ Տեղակալ Ճէնէոալին գրած ի Տօվինի շէտէ թէն նոյեմբերի 26 ին, ու թուղթը ինկիլիզի ծովակալին խափոքան Գալայի Գանատայի լին վրայ՝ գրած սեպտեմբերի 24ին. ուսկի իմացվեցան տեղն ի տեղը՝ ցաւալի պարագաները. որոնք ճշմարտեցին կորուստը ինկիլիզի նաւահանգիստին, որ դերի ընկաւ Ամերիգացւոց ձեռքը։ Կերեւայ որ աս կորուստանս պատճառը եղաւ մահը Տօվինի նաւապետին, որ մեռաւ սկսելուն պէս պատերազմը։

13ին։

Պէնէլթօի Ֆրիսթան՝ որ ճամբայ ելերէր Սէ Լորենցիոս բաժ գետէն հոկտեմբերի 22ին, խապար բերաւ թէ Հալիֆաքս քաղաքը Ամերիգայի, կաւոյան թէ Տոնամօնո Ճէնէոալը ծեծած ըլլայ զԱմերիգացիները, և թէ թշնամիները քաշուած ըլլան Սաքեք նաւահանգիստը, յետ հաւան թոցնելու ձեռքի բերգը։

Կղզիին Լոնտայէն մէկ թղթէ մը որ գրած է Պաւէոս Այոէս քաղաքէն Ամերիգայի սեպտեմբերի 8ին, 1814, թէ ասօր անքի են խապար, որ Փիցուէլա թափական Ճէնէոալը՝ զօրագլուխ Լիմայի զօրքերուն,

իմանալով Եւրոպայի վերջի դիպուածնէ՛րը, մէկ զինադադարում մը առաջարկեր է Ապստամբներուն, ու խոստացեր է իրենց ետ քաշել իր զօրքը, յուսալով որ իրենց Բաղապետը յօժարի հաշտութիւն խօսիլ Մալտոնաի հետ։ Կրպիկ աղէկ տեղայ, թէ խըրկըվելու Լիակատար իշխանութիւն ունեցողները ի Սպանիա, պիտոր խօսին ինկիլիզի ռային անիջական օրինադրութեը տակը։ Աս ալ կրսեն թէ աս Լիակատար իշխանութիւն ունեցողները պիտոր առջև դնեն Սպանիայի թափարին, թէ իրենք կը ճանցան իր գլխաւորութեը Ամերիգայի Սպանեօններուն վրայ՝ աս դաշամբս, որ ասոնք ունենան իրենց կողմանէ մարդիկ Գոռէս կոչուած ծերակուտին մէջ Սպանիա. և թէ ամէն ծովային, քաղաքական, և վաճառականութիւն իրաւունքները, որ հիմա կըլայեցնեն, ան ամէնը հաստատէ իրենց՝ թաղաւորը։

16ին։

Սէ Տոմինիկոս կղզիին թղթերը կըգրին թէ Ֆուանսըղի թաղաւորին Լիակատար իշխանութիւն ունեցողները սկսան իրաւախոս ալիւլըլըլ ֆէթիտին հետ փոթօ Ռէալի կազմեթան ալ հոկտեմբերի 22ին, կըխօսին մէկ դաշնադրութե մը վրայ, որով ֆէթիտն ու Գրիստափոր միաբաներ են Սէ Տոմինիկոսի կղզին յանձնել Ֆրանսոցի կառաւարութեը։

19ին։

Երկու երևելի անձնք պատրաստած էին Վիեննա մեծամարտուն ընել մէկ մէկու հետ. ասոնք մէկը (ինչպէս որ կրօն ինկիլիզի կազմեթան) էր իշխան Չ... մէկալը իշխանն է... Աս հակաճառութե պատճառը էր զինուորական տաղանդը Գորէֆէլը մէկ մարդուն, որ երկան ատեն բոլոր Եւրոպայի աչքը իր վրայ դարձնել տոճաւ։ Հոն եղած Ճէնէոալները մէջ մտնելով բաժնեցին իրարմէ։

Ինկիլիզի կազմեթան կըպատմէ մէկ ծածուկ դիպուած մը. թէ Վիեննա մէկ քաղաքական խօսակցութե մը մէջ, Թաղաւորին մէկը հակաճառութե ըրեր է թաւելոյն ֆուանսըղ իշխանին հետ, որ կըպաշտպաներ Փաքտինայի անկախութեը՝ կերպ կերպ իրաւունքներով։ Աս իշխանը պատասխանեց թափարին. թէ որ աս ասպէս ըլլայ, Հրամանոց Վէհափառութեը իրորսընցնէ աս բանս մէջը։ Խօսքը կորցնէ թափար, ու ըսաւ. Ի՛նչ. կըկորսընցնեմ. Ի՛նչ պիտի կորսընցնեմ։ Պատասխանեց իշխանը. կըկորսընցնեմ թաղաւոր հրամանոց տիտղոսը լաղաւը ԸԼալու. Խաղաղութե Եւրոպայի։

26ին։

Համառոտութիւնէն իւր իւրէն, որ գրած է Աբրե-
գայի Փաթեայէն :

Ի իմայի կառավարութիւն հրատարակեց զին-
քը՝ անկախ Սպանիայէն, վար ձգեց զՓո-
խարբան : Բոլոր Փերուն ալ ազմբի մէջ է,
ու Պուէնսոս Այոէսի օրինակը նայելով ե-
րեն հետեւեցաւ : Աս փոփոխութիւնները կը-
լան կոր առանց արուն թափելու :

27 ին :

Աս օր հաստատեց հիմակման կառավարող
Իշխանը՝ Կանտի մէջ եղած հաշտուէ դաշ-
նագիրը . ու մէկ դեսպան մը տէրուէ զնաց
ասկի տանելով զհաստատութիւն անոր դէպ
ի Ալերիգայ Փոսթամութի ճամբով :

Պաշտօնատարական թղթերը այսպէս կը-
անէ համառոտ . Ալերիգացիները վաղ եկան
ծովային իրաւունքներէն, ու հրաժարեցան
ինչ և իցէ փոխարէն ուղեւոր ան աւարնե-
րուն շէտեմբերու հմբ, որոնք եղան խորհր-
դարանի : հրամանաւ, կի ուրիշ ինչ և իցէ
կերպով : Աս հաշտուէ դաշնագրին մէջ՝ հոգ
տարվեցաւ հնորստանցիներուն բանին հա-
մար ալ, (որոնք դաշնակից էին Իսկիլիդի
տէրութիւնը պատերազմներու ատեն,) մէկ
մասնաւոր դաշնագրութիւն մը, որով պէտք
է որ անոնց նորէն դարձովին ամէն իրենց
կալուածքները Իւլիքը, իրաւունքը, ու մաս-
նաւոր ազատութիւնները՝ ինչ որ ունէին, կի
որոնց իրաւունք ունէին 1812 էն առաջ :
Ամէն երկրի վերաբերել ինդիքները որոյ
վրայ վէճնիլայ կայ, պէտք է որ առջև դը-
մին ան վրակեցուներուն, որոնք աս բանիս
համար որոշված են երկու կողմէն, ան թէ-
ութիւններով, որոնք յիշուած են դաշնագրին
մէջը : Ու բանի որ աս քննելու բաները չեն
լմնացած, Փաստամագոտիին մէջի եղած
կողմները մնան ինկիլթեայի ձեռքը : Ու-
րիշ ամէն երկիրներ, որոնք առին մէկ զմե-
կու ձեռքէ՝ ետ արըվին երկուքին ալ : Ասկէ
դուրս՝ կրտեն թէ ձկնորսութիւն իրաւունքը
նոր երկրի ծովկերքներուն քով չի նորոգ
վեր . անանկ կրտեն թէ թող պիտի չի արըվի
առուտուր ընելու՝ հնորստանի մէջ եղած
կալուածքներուն Իւլիքուէ հետ :

Ք Ռ Ա Ն Ս Ա .

Փետր. 14 Դեկտեմբեր :

Արհաստատեն, թէ թիւրը՝ մարդիկ կըկար-
դարէ եկեղեցական բաներու վիճ, յանձնե-
լով զան՝ երևելի ու իմաստուն եպիսկոպոս .
որով կըլուսան թէ նորէն հաստատվի Ֆը-
ռանսայի եկեղեցւոյն առջի պայծառութիւն :

Լուիսի Պոնափարթէին, ու իր կնկանը Տու-
քեսաս Սք Լոին դատաստանը պիտոր խզ-
վի Փարէզի դատաստանարանը : Երկը կու-
ղէ եր անդրանիկը եր քով պահել, կնիկը
չուզէր տալ :

Փռանսայի թիւրը՝ իր խոհեմութիւն ու ա-
նուշուքը միշտ իրեն կըբաշէ ժողովրդեան ու
զորաց սիրտը : Դիտաւորուէ ունի բանալ
Փարէզ՝ մէկ նոր հիւանդանոց մը . ու կու-
րերուն դպրոցն ալ իրեն պաշտպանութեան
տակը առաւ . որով շատ մեծ համարում ու-
նեցաւ ժողովրդեան դիմացը :

Սք Դիոնեսիոսի Աբբայուէր կընորո-
գեն կոր . ասոր մէջ Ըուշանները ամէն տեղ
կըյաջորդէն կայսերական Մեղուններուն :
Կերենայ թէ՝ կուզեն աս հին գերեզմանա-
տունը Փրանսայի թիւրը՝ իրեն առջի պայծա-
ռութիւն հասցնել :

19 ին :

Պոնափարթէին (թիւրին աղբարը) աս առաւօտ
գնացեր է Սանս քաղաքը որ ներկայ գտվի
ան հանդիսին որ պիտի ընեն հոն նորոգուէ
համար գերեզմանին Տէլֆինսյին ու Տէլֆե-
նային իր ծնողացը :

Բանի մը շաբաթ կայ՝ որ Ճիւզէփէ
Պոնափարթէին նորէն կըբնակի Փռանսայի գե-
ղը, որ գնեց իրեն Աօ դաւառին մէջը :

Կըսվի թէ՝ Փաշէի Փոնիսիփէն (Սպա-
նիոյի ծեր թագաւորին վեղիքը) հրաման ա-
ռեր է քաջվելու մէկ կողմի մը ճերմակ ծովուն
մէջ :

Պոնափարթէին մէջ կըսվի թէ՝
Տիրող Իշխանը Միացեալ Նահանգներուն՝
հրատարակված է թիւր Պէլիքի :

Գաթթուի Տուգա անուանեցաւ Տե-
ղակալ Ճէնէռալ Փռանսայի թիւրին զորքե-
րուն :

Մէկ թիւրական հրաման մը ելաւ, որ
ամէն Փռանսալ զինուոր ու օֆիցիալ որոնք
առանց մասնաւոր հրամանի թագաւորին
օտար տէրութեանց կըծառայեն, դառնան
Փրանսա՝ աս հետագայ ապրիլին իհէն ա-
ռաջ . չէ նէ կըկորսնցնեն իրենց Փռանսա-
ղութիւն իրաւունքը, ու ծանր պատժոյ տակ
կըման օրինաց կէօրէ, թէ որ Փռանսայի
դէմ սուր առնուն :

21 ին :

Լմառու 16 ին, թագաւորը հաստատեց, որ
Մարտիլիա ըլլայ ազատ նաւահանգիստ, քի
ազատ մաքսէ կէօրէի :

Մէկ մասը թիւրական ազգատոհմին
երէկ

երէկ Թողուց Փարէզ՝ երթալ 'ի Սանս, որ
իրենք ալ ներկայ դրովին եկեղեցական հան-
դիսին քէ՝ քեր 19 Իւլիի քալը: Աս պատիւը
որ ըրին 'ի յիշատակ Փռանսայի Թագաւո-
րազուններուն, կըլայ իբր մէկ բաւութիւն
մը այնչափ նախատանացը, որ ըրաւ անոնց
Փռանսրզի ազգը: Ասանկ հրէաներնայ գե-
րուէն ետև սրբեցին ու հաշտեցուցին Այ
Տաճարը:

22ին:

Ինդհանրական Ցանկը պատանդներուն Է-
հինէրն Լուտովիկոսի Ժէ, և իր ազգատոհ-
մին տրվեցաւ մէկ Թագաւորացուն իշխա-
նութեայ մը. որ ինչպէս կրսէն՝ ունի դիտա-
ւորութիւն Թագաւորին կիմացը հանելու:
Ճար չեղաւ գտնել բայց և Թէ 567 անուն
փոխանակ 1100 անուններուն տեղը, որ կայ-
ին 1791 տարւան Ցանկին մէջը, որ իրեն
հետ տարաւ Ինկիլիթեոս Թր Վիկէտուաւ
աս 567 մարդէն ալ շատոնք մեռած են կամ
կախաղանի վրայ, կիմ ուրիշ իշխանաց դը-
շակի տակ: Ասոր չէն կըրնար գտիլ կեն-
դանի աւելի քան 400 հոգի աս բարենա-
խանձ հպատակաց մէջ: Լաւ է որ ետքի ե-
կողները գիտնան, Թէ 23 տարի է, որ շատ
Փռանսրզներ իրենք զիրենք առաջ կընետէ-
ին՝ զոհել խորպան ընել իրենց ազատութիւնը
որ պահեն զազատութիւն իրենց իշխանաւո-
րացը. կըստորագրէին ալ թղթերու որ գնեն
զկալուածքներ Բուլբը իրենց իշխանացը.
կուտային առատ ուղորմութիւն կողոպտած
տէրտէրներուն, ու կըրիկէին աւելի առա-
տուութի խեղճ քստորած Փռանսրզներուն օ-
տար երկիրներ: Աս պատանդներուն ցանկը
կըկարդան հալկետով Ինկիլիթեոս ու Նէմ-
ցհատան:

23ին:

Մատրիտի Թղթերը կըպատմեն, Թէ Ինկի-
լիզը խնդրած ըլլայ Սպանիայէն՝ իր պատե-
րազմական ըրած խարճերուն համար զՄա-
հօն, ու զՉեուլթա. և Թէ Սպանեօնները
կամրցենկոր զՄահօնը. բայց անհաւա-
տայի կերեւնայ աս խապարս, ու անհիմ:

— Ինչքան հիմա դեռ չիհասաւ Փռան-
սա՝ մէկ որոշ պարագաներով խապարմը, Թէ
յանձնրված ըլլայ Մառլեիկա ու Կուա-
տայուփա Փռանսրզի կառավարուէն ձեռքը:

Մէկ Աւկուստայի Կաղէթամը կըսէ Թէ՝
Սպանիայի Թագաւորը նորէն ուղեր է, որ
Հռոմայէն ձեռք ձգէ զՓռնիչիքէ տի Փա-
չէ. բայց ծեր Թիթը Սպանիայի որ Հռոմէ,
Թող չի տար՝ որ իր հին վեզիրը ձեռք խնայ:

— Այրի կնիւր, ու որդիքը ձենէնալ

Մոռօին՝ միշտ Փարէզ են. աւելի ընտրե-
ցին առանց անուան ապրիլ իրենց հայրենի-
քը, քան ան մեծամեծ պատիւները, որոնց
յոյս ունէին կայսերական քաղաքը Մոսկով-
ներուն:

— Հատ եկեղեցիներ նորէն կըբացվին
կոր Փռանսա, ու ամային պաշտամունքնե-
րը կըկատարվին հօն:

— Մատրիտի 13ին խապարները կըհաս-
տատեն, Թէ Ամերիկայ Մեսսիքօյի Թա-
գաւորուէն ապստամբները մէկ տեղեցան,
ու մէկ բերնով հրատարակեցին՝ որ անկախ
ըլլայ հիւսիսային Սպանեօնէն: Աս բօթ
խապարս՝ շատ մեծ սրտի կտորուք ու վախ
ձգեց Մատրիտ քաղաքը:

24ին:

Ան ժամանակը՝ որ Մօնսիւ Գօնլթէ տ' Առ-
թուա, Թիթական մեծագործութիւն Սանս
քաղաքին մէջ կընծայէր մէկ սիրոյ պատիւ
մը առ 'ի յիշատակ իր ծնողացը, նոյն ատե-
նը հասարակաց երախտագիտութիւն Փարէ-
զի մէջ կընծայէր մէկ չափաւոր համեստ պա-
տիւ մը առ 'ի յիշատակ Մարիամու Ճիու-
սեփինայի Փռանսայի Տէլֆինային, իրեն եղ-
բարցը ու քրոնկուանցը Սաքսոնիայի սօյէն,
Մարիամ Ամալիային Նաքօլիի ու Սպա-
նիայի Թագուհիին, Մարիամ Աննային Պա-
վարիայի Կայսրընտուհիին, ու Կլեմէսի
Վէնէնլաոսի Թագվէրի Կայսրընտուհիին. որ
ասչափ փառօք կըրիայի ամէն իշխաններուն
մէջ, որոնք մեծասրտութիւն տեղի ապաստա-
նի յընձեռ ըլլաւ՝ տուին մեծագործ Փռանսրզ
փախտականներուն: Մեծասրտութիւն դէմ
ելլելով ամէն վտանգներուն, որոնց մէջ կը-
ձգէր զինքը իր երկրին մօտիկուիւր, աս խա-
րէթի իշխանը ինդունեց մէկ ձախորդ ժա-
մանակի մը մէջ Փռանսրզ իշխաններ ու փա-
խըստականներ, ու բացաւ անոնց առջև իր
գանձը: Քսան հազարէն աւելի՝ ժողվեց իր
երկրին մէջ. ասոնցմէ մէկ քանին զարմանա-
լով ու գովելով իր պալատին մեծագործ շէն-
քը, պատասխանեց իրենց. „ Կըցաւիմ, որ
աս շինել տուէր եմ. զերէ 12 միլիոնը՝ որ
խարճեր եմ վրան, կըրնայի հիմայ խարճել
ան, որ անուշքնեմ ձեր լեղի վիճակը, ու
ձեր աղնուական ընկերներուդ ատ մեծ դըժ-
բաղըութիւնը: ” Մէկ այսպիսի մեծասրտուէն
մը՝ յանցանք մը եղաւ անոնց աչից առջևը,
որոնցմէ ազատեց զմեզ հիմայ ամային նա-
խախնամութիւն: Վէնէնլաոս կողոպտած իր
երկրորդիքէն՝ չի զըլջար ինչ որ ըրաւ, հապա-
կըսէ. „ Չեմ ցաւիւր, զերէ Թագաւորաց
արդար դատաստանը պաշտպանեցի. ինչ որ
ըրի, հիմայալ կընէի: ” Վէնէնլաոսի յիշա-

տաւ

տակը՝ անմահ պիտի մնայ Ֆռանսըզի սրտին մէջ, ու իր ժողովրդեանը՝ որ ինքը երջան կացուց : Ան յիշատակարանները՝ որոնք կրտաւորվին մարդուս սիրտը, աւելի դիմացկուն են քան զան յիշատակարանները, որոնք կրտնկեն իրենց ձեռքը :

27ին :

Ֆռանսըզ փախտականները դէպ ինկիլթէ-ռայ իրենց Պոսպօնի թէրական ազգատոհմին համար, որոնք կրնադրէին ըստկով ընկերել իրենց, առին իրենց թռչակը Էօլօֆէն ինչվան դեկտեմբերի ետքը : Ասոնցմէ ոմանք առին ինչվան 40 հիր ղուռուշ :

— Ֆռանսայի թէրը իրեն լարեւորտ առատութիւն հոգ ունի ամէն խեղճերուն վրայ : Իրեն քեսէյէն տոհաւ 100 հիր ղուշ՝ դպրոցի խելուն ու համբերու, որոնք աղքատ են ու բան չունին :

— Հիմակվան կառավարունց մէջ՝ Լօթէրիայն Էիանօյի խաղը կը մտածվի ընտոր մէկ հարկաւոր չարմը . բայց պէտք է որ աս ալ ճամբով ըլլայ ու կանոնաւոր : Ֆռանսայի վերջի կառավարութենէն ետեւ՝ խիստ շատցած էր թիւը աս Լօթէրիաներուն շատ ֆրասով . 15 տարւան հաշիւէն հէտակէն կրտեսնանք որ 180 անդամ մէկ տարւան Լօթէրիայն՝ աւելի շահ մը չէ բերած գանձատան խաղալին քան զ24 անգամը որ կը լար առաջ : Աս սրէն սրէն Լօթէրիաները չէ թէ միայն մէկ մեծ օգուտ մը չէին բերեր Տէրութե, հապա մարդկային Ընկերութե մեծագոյն ֆրաս մը կը բերէին, միշտ հապէսը ու երեւակայուիլը վառելով՝ աշխատաւոր բանւորներուն . որոնք կը լորսնցնէին իրենց ժամանակը՝ հիսապ ընելով փոփոխութիւնները բաղդին, որ երկու օրն անգամ կը նորոգվէր, ու կը մոռցնէր իրենց թէ ձեռաց աշխատանքը, ու երեսաց քրտինքը՝ է առաւել պատուական ու առաւել ապահով վաստակը, զոր մարդս կրնայ ձեռք բերել, քան թէ խաղի բաղդը, որ անստոյգ է, ու խաբեբայ : Ասոր համար հրամայեց թէրը, որ յունվարի մէկէն 1815ին սկսած, վերցրվին Պոստօի ու Լիօնի Լօթէրիաները . ու կը յայտնէ թէ մօտիկներս պիտի վերցնէ Լիլային ալ ու Էլթրասպուռկինը : Այնպէս որ՝ ետքը միայն մնայ փարեզի Լօթէրիան ամիսը երկու անգամ : Աս թէրական հրամանս կրնանք մտածել թէրին կողմանէ՝ ընտոր մէկ թեթեւութի մը տուրքերու, ընտոր մէկ ճշմարիտ բարերարութի մը թէրին, որ չանցնիր մէկ օր մը, առանց մէկ նոր բարերարութի մը ընելու, կամ մտածելու իրեն ժողովրդեանը :

30ին :

Կարդինալ Ֆէշը իրեն ազնիւ վարպետաբան արձանները ու պատկերքները անտուկ դրեր էր, ու մեծ մասը մաքսատունը Էօֆօրէ-լէ տարեր էր, որ Իդալիա պիտի խրկեր, ամմէնալ կնքեցին Էօֆօրէյին տէրութե կնքով :

Լիօն . 15 Դեկտեմբերի :

Մէկ թաղաւորական արգելք էստա մը ելաւ ամէն արհեստաւորաց ու քաղցցոց, որ ամենեւին չի շինեն, չի դործածեն այնպիսի պատկերք, կնիք առայ, նշան, միտալ, կոճակ, արձան, կամ տպած թուղթ, որոնք առջի կառավարութեը յիշատակ մընեն, կի կերեցնեն Պօնաբարթէին պատկերքը, կի իրեն աղդին, կի կայսերական արծիւ . զերէն աս ամէնը՝ ներհակ է թէրական պատուոյ Պոսպօնեան տանը . ասոր համար կը հրամայէ որ կտորեն ամէն կաղպար խալի, տիպ Խիսէ ու կնիք 4 օր ետեւ աս ծանուցմանս : Ասոր նման կարդերէ, որ չըլլայ թէ մէկը նաեւ ծածուկ վրան ունենայ այնպիսի մէկ նշան մը Ասպետութե գալալէ-ռու-լէ եւ, չէ նէ կը պատժվի ընտոր մէկ ծածուկ խռովաբար մը :

Ֆ Ի Ա Ն Տ Ր Ա .

Պոստօի Լիօն . 16 Դեկտեմբերի :

Լսիօզ Մինա սպանիացի Ճէնէռալը, որ շատ անուն ունեցաւ Նաւառուայ դաւառը աս ետքի Սպանիայի պատերազմներուն մէջը, քաշուեցաւ ինկիլթէա :

— Աս մարդուս ու ըլլալը, ու իր անբաղդուն պատճառը՝ կարճ մը գրենք հոս : Աս քաջասիրտ պաշտպանը թաղաւորական աթոռոյ, ու եկեղեցւոյ կրկոցէր Պօնաբարթէին իր հրապարակական թղթերուն մէջը՝ մէկ Աւաղակ մը . բայց Ֆռանսըզի զօրքը իր անմահ քաջութեը համար կը կոչէր թէր Նաւառուայի : Ասիկայ ունէր իր դուռը միայն 5 հիր ընտրած ղեկնոր, թէպէտ կը նար աւելցնել մինչև 12 հիր, բայց չուզէր . փորձով զիտէր ամենուն մէկին մէկին սիրտը ու քաջութիւնը, ու կրկոցէր զանոնք՝ մարդիկ արժանիք մեռնելու իրենց հայրենեաց համար : Չունէր աս իրեն զօրքերուն պատեւաղմի Օֆիցիալներ, զերէն ամէնքը աղէկ սորված ըլլալով առանց Օֆիցիալի կրնէին իրենց պաշտօնը : Երբոր Մինա կրտեսնար զինքը մեծ վտանգի մէջ, իրեն բոլոր զօրքը՝ արհեստովմը կը բաժնէր պղտիկ պղտիկ խումբեր պէօլի-լիւր, ու վերջը ուղած տեղը՝ կը ժողովէր զիրենք : Եղաւ անգամ մը, որ Ֆռան

Ֆուանսըզի մէկ Ճէնէնալը 20 հազարաւ կարծեց թէ պաշարեր է չորս դիէն Մինային բանակը . վրայ վազեց , ու զըտաւ բոլորը՝ պարապ , ու խախտեց եղան : Իսկ Մինան 30 միոնէն աւելի հեռունաց պտրտելով եկաւ նորէն իր բանակը առանց մէկ զենի մը : Երբոր կրեռներ Ֆուանսըզի մէկ լըտես չալաւ մը , չէր մեղցներ . հապա մէկ ականջը կը կըթով կըգրեր Մինա : Հատոնք այսպիսի լըտեսներէն խեղճաբար լեռնէ լեռ քալելով անօթի մեռան , զերէ չէին համարձակեր երևնալ , որ Սպանիոնէրուն ձեռքը չէինան : Ասոր դէմ , ինքը ունէր շատ աչքեաց լըտեսներ . որով մէկ անգամ մը ռաստ բերաւ մէկ Ֆուանսըզի դուռը մը 1500 . ասոնցմէ 500ը սպաննեց , 150ը գերի ըրաւ 9 Օֆիշիալով , ու բռնեց մէկ կարաւան չէլրան մը , արժողէքը մէկ միլիոն ուէալ : Պատերազմէն ետեւ թող կուտար իր զօրացը , որ ամենքը մէկ տեղ թալլեն թշնամիները . բայց երբոր կըգտնար զմէկը , որ ուրիշներէն զատուած՝ կըթալէր , մէկէն կըսպաննէր : Ասանկով շատ չարքիկեց ու վնաս տուաւ Ֆուանսըզին : Թող տըւաւ Նաւառուացոյ որ առուաուր ընեն Ֆուանսայի հետ , որ իրեն զօրաց դուռնայ պաշար չախէ ու զենք : Բայց ախտոս , որ աս կտրիճ հայրենասէր զօրապետը ետքը շատ աւրեց իր անուրը . զերէ երբոր Սպանիայի թէրը ետ դարձաւ , ու Սպանիան ուղեց կանգնել հին թագաւորութիւնը , ինքը գլուխ քաշելով՝ չուղեց հնազանդիլ , որով օտար երկիրներ բարբարական եղաւ , ու չի կըրցաւ իրեն հայրենասիրութե արժանաւոր պառուղ վայելել իր հայրենեաց մէջ , ընդունելով իրեն ազգէն շնորհակալութիւն , սէր , ու պատիւ , ինչպէս որ արժանի էր :

ԶԱՒՅԵՐԻ.

Յոռուի . 19 Դեկտեմբերի :

Սալթէլինա , Քիալէննա , ու Պոռմիօ զաւառները պիտոր միանան Զվեցերիին հետ , ինչպէս որ յայտնած են միաբանեալ տէրութիւններ :

— Մեծ ժողովը կոիճիօններուն Նոյեմբերի 24ին վճռեց մէկ նոր զինուորական կարգաւորութիւն մը . այնպէս որ ամէն

քաղաքի 18էն մինչև 30 տարեկանը պարտական է ծառայելու հայրենեաց : Ընտրած զինուորները՝ 4 տարի պիտի ծառայեն : Բոլորը կըհասնի 1400 մարդ . քի՛ 100ին 2 :

21ին :

Սըլսովի թէ Զվեցերիի գնդերը՝ որ դեռ ինկիլիզի ծառայութե մէջն են , պիտի քակվին : Ասոնցմէ մէկ դուռը (քի՛ Վադդէն վիլլէ) շատ անուն ունեցաւ Ամերիգայ զանազան տեղ . մանաւանդ՝ երբոր վրայ վազեցին Էսիէ բերդին , բայց շատ ալ կոտորվեցան :

— Հրաժարած թէւորը Ըվետին՝ քանի մը օր է , որ դարձաւ Պաղիլէա քաղաքը Զվեցերիին :

— Զվեցերիի կազմեաներուն ըսելուն կէտէ , կերպ կերպ առաջարկութիւններ որ եղան Նեմցեստանի սահմանադրութեց համար , գլխաւորները՝ աս չորսն են : 1. Հին սահմանադրութիւն կայսերութե՝ պաղիլա փոխորութիւններով : 2. Երկու դաշնակցութիւն հարաւային ու հիւսիսային : 3. Պահել անկախութիւն ամէն մեծ ու պզտիկ տէրութիւններուն Նեմցեստանի , ինչպէս Իդալիայի մէջ : 4. Մէկ նոր դաշնակցութիւն մը՝ երաշխաւորութե չէֆիլաթէ տակ Եւրոպայի թագաւորաց , ու Աստրիայի պաշտպանութե տակը . որոյ Տիրօղը ըլլայ գլուխ աս դաշնակցութե : Հաւանական կերևնայ , թէ աս ետքի առաջարկութիւն ընդունելի ըլլայ :

Հաֆուա . 4 Յունիսի .

Մէկ Լիւիսիայի դեկտեմբերի 17ին գրած թուղթ մը կըսէ . Քանի մը օր կայ , որ ամէն դաւառ Սաքսոնիայի՝ մարդ խրկեցին զլիաւորներուն , որ դիմեն Վիեննայի իշխանութիւն , որ բոլոր ազգին բերնովը խընդրեն որ պահվի Սաքսոնիայի ամբողջութիւնը , չի բաժնրվի , բայց հիւ թագաւորին անունը չեն յիշեր ան խնդրեցին մէջը :

7ին :

Թի որքափ մեծ սէր ունին Սաքսոնները իրենց թէւորին Ֆէտէրիգոսի Աւուստրոսի , աս միայն հերիք է ըսել , թէ աս թէւորին 5000 պատկերքը քանի մը օրուան մէջ ծախվեցան :

Աս դործքս՝ որ է պատմութիւն հիմակական ատենիս , տասնըհինկ օրը մէյմը կըտըպվի .
'Ի ՎԵՆԵՏԻԿ 'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ :

Ով որ կուզէ առնել , Ստանպօլ Զուխաճի խանին քովը Պախաճի խանութ կայ գերը ծախօղ : Հոն իր անունը գրել տայ վճարելով մէկ անգամ քաւառն զի՛շ բոլոր տարվան համար : Այժմէն մէկ բօստա գալուն տասնըհինկ օր անգամ մը՝ ան խանութը խրկէ իր մարդը , առանց բան մը վճարելու կառնէ :